

## ՍՈՒՔԻԱՍ ԱՆԱՍՏԱՍՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի  
հայցորդ*

### ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ՝ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հայաստանում հարկային քաղաքականության պետական կարգավորման արդյունավետությունը բարձրացնելու համար, նախևառաջ, պետք է իրականացվեն համապատասխան բարեփոխումներ՝ ուղղված հարկային քաղաքականության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը և հարկերի խթանիչ գործառույթի վրա հիմնված հարկային համակարգի ձևավորմանը: Հայաստանի Հանրապետությունում առաջիկա տարիներին իրականացվելիք հարկային բարեփոխումների հիմնական նպատակը պետք է լինի տնտեսական աճին նպաստող, տնտեսական նախաձեռնությունները և ներդրումների ներգրավումը խթանող, ազգաբնակչության սոցիալական վիճակը բարելավող հարկային քաղաքականության ձևավորումը, որը միաժամանակ կապահովի նաև համապատասխան ծավալի բյուջետային մուտքեր՝ պետության կողմից ստանձնած ծախսային ծրագրերի ֆինանսավորման համար:

Ելնելով հարկային քաղաքականության ոլորտում առկա խնդիրների առանձնահատկություններից՝ հարկային քաղաքականության պետական կարգավորման ոլորտի բարեփոխումները, ելնելով ներկայիս տնտեսական հարաբերությունների զարգացման առանձնահատկություններից, պետք է ընթանան երեք հիմնական ուղղությամբ.

- օրենսդրական,
- տնտեսական,
- վարչարարական:

Օրենսդրական դաշտում հարկային քաղաքականության պետական կարգավորման նպատակը պետք է լինի ներքոհիշյալ խնդիրների լուծումը.

1. հարկային օրենսդրության միասնականացում, հստակեցում և պարզեցում:
2. Օրենսդրության մեջ հարկային արդյունավետ հսկողության մեխանիզմների ներդրում,
3. Ընթացիկ տարում հարկման ռեժիմի փոփոխության բացառում: Ներկայումս, գործող օրենսդրությամբ, մասնավորապես, «ԱԱՀ մասին»<sup>1</sup> և «Շրջանառության հարկի մասին»<sup>2</sup> ՀՀ օրենքներով նախատեսված են, որ հարկման սուբյեկտ համարվող տնտեսվարողի կողմից իրացման շրջանառության ծավալը սահմանված նվազագույն շեմը գերազանցելու դեպքում փոփոխվում է հարկման ռեժիմը և մասնավորապես շրջանառության հարկ վճարողը տեղափոխվում է հարկման ընդհանուր դաշտ, իսկ ԱԱՀ վճարող չհանդիսացող հարկատուն դառնում է ԱԱՀ վճարող: Այս դրույթների առկայությունը, կարծում ենք, ավելի բարդացնում է առանց այն էլ բավականին բարդ ու խրթին հարկային օրենսդրությունը:
4. Հարկային մարմինների և տնտեսվարող սուբյեկտների միջև ծագող փոխհարաբերությունների կարգավորման մեխանիզմի կատարելագործում,
5. Հարկային իրավախախտումների համար սահմանված ֆինանսական պատասխանատվության միջոցների վերանայում, վարչական և քրեական պատասխանատվության միջոցների մեղմացում: Ներկայումս գործող բավական խիստ պատժամիջոցները չեն նպաստում հարկերի վճարումից խուսափելու դեպքերի կրճատմանը, այլ ընդհակառակը, դրանք բացասաբար են անդրադառնում տնտեսության և հասարակության մեջ բարոյա հոգեբանական վիճակի վրա՝ չնայատեղով տնտեսության զարգացմանը և ներդրումների խթանմանը:
6. Ազգաբնակչության եկամուտների վրա հարկային ճնշման թուլացում, այդ նպատակով եկամտային հարկի գծով չհարկվող շեմի սահմանում: Ինչպես նախկինում գործող «Եկա-

<sup>1</sup> «ԱԱՀ մասին» ՀՀ օրենք:

<sup>2</sup> «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք:

մտահարկի մասին» ՀՀ օրենքով<sup>1</sup> էր նախատեսված, այս հարկատեսակի դեպքում ևս նպատակահարմար է անհրաժեշտ է սահմանել անձնական նվազեցման գումար, ընդ որում, ավելի բարձր քան նախկինում, կապված գնաճի արդյունքում դրամի գնողունակության նվազման հետ: Այս քայլը կնպաստի ազգաբնակչության առավել խոցելի խմբերի սոցիալական վիճակի որոշակի բարելավմանը:

Տնտեսության խթանման ու զարգացման ոլորտում միտված հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնական ուղղությունները պետք է լինեն.

1. հարկեր/ՀՆԱ հարաբերության աստիճանական մեծացումը: Ինչպես վերևում նշվեց այս ցուցանիշը մեր հանրապետությունում բավական ցածր է և վերջին տարիներին տատանվում է 16-19 տոկոսի սահմաններում, այն դեպքում, երբ Եվրամիության անդամ պետություններում կազմում է միջինը 34.4 տոկոս, անցումային տնտեսություն ունեցող Լեհաստանում՝ 34.8, Չեխիայում 36.9, Էստոնիայում 33.1, Լատվիայում 30.5, Բուլղարիայում 43.2 տոկոս,<sup>2</sup>
2. Հարկերի խթանիչ դերի ընդլայնումը: Առանց վերջինիս վրա հիմնված հարկային քաղաքականության՝ դժվար է ունենալ զարգացած տնտեսություն որևէ երկրում: Այս գործառույթի ընդլայնման շնորհիվ միայն կարելի է ապահովել կայուն պետական եկամուտներ՝ խթանելով նաև տնտեսական գործունեությունը հանրապետությունում: Հիմնվելով միայն հարկերի ֆիսկալ գործառույթի վրա, հարկային քաղաքականությունը մեր հանրապետությունում չի կարող ապահովել տնտեսության երկարաժամկետ զարգացման նախադրյալներ: հարկերի խթանիչ գործառույթը կյանքի կոչելու համար նախևառաջ անհրաժեշտ է իրականացնել ինչպես հարկային քաղաքականության ուղղությունների, այնպես էլ հարկային համակարգի և գործարար միջավայրի բարելավման հետևողական միջոցառումներ:
3. Հոքր և միջին ձեռերեցության խթանումը: Գաղտնիք չէ, որ փոքր ու միջին բիզնեսը հանդիսանում են ցանկացած տնտեսության կայուն հիմքը և այս ոլորտում պետության կարևորագույն առաքելությունն է հանդիսանում բարենպաստա հարկային դաշտ ապահովել դրա համար: Այս ոլորտի կայուն զարգացումը մեծապես կնպաստի պետության համար հետագա կայուն հարկային եկամուտների ծավալի ընդլայնմանը:
4. Տնտեսական նախաձեռնությունները խթանող հարկային համակարգի ձևավորումը և զարգացումը: Ներկայիս գործող հարկային համակարգը չի նպաստում ձեռնարկատիրական նախաձեռնությունների ընդլայնմանը: Ինովացիոն ոլորտներում վեճարարային կապիտալով բիզնես ծրարգրերի իրականացման ժամանակ նպատակահարմար կլինի առաջին մի քանի տարվա համար հարկային պարտավորություններից ազատել հարկատուներին, ինչը, կարծում ենք, որոշակիորեն կխթանի այս ոլորտում տնտեսական ակտիվությունը
5. Հարկային բեռի թեթևացումը: Տնտեսական ճգնաժամի արդյունքում համախառն պահանջարկի կրճատման ժամանակ, որպես կանոն, պետությունները նվազեցնում են հարկային բեռը՝ նպաստելով սպառման և ներդրումների աճին: Մասնավորապես, Ռուսաստանում շահութահարկի դրույքաչափը նվազեցվեց 24-ից մինչև 20 տոկոս: Մեր հանրապետությունում, ընդհանրապես, որևէ դրույքաչափ չփոփոխվեց, ավելին, նախկինում գործող եկամտահարկի և սոց.վճարի փոխարեն 2013 թվականից գործեց եկամտային հարկը, որի հարկային բեռը զգալի գերազանցում էր նշված երկու հարկատեսակի ունեցած բեռին: Սա ևս վկայում է, որ մեր հանրապետությունում միանշանակ կերպով կիրառվում է հարկերի ֆիսկալ գործառույթը: Կարծում ենք, որ հարկային բեռի ընդհանուր մակարդակի կրճատման նպատակով անհրաժեշտ է.
  - ապահովել հարկատուների համար հարկային ճնշման առավել հավասար մակարդակ,
  - նվազեցնել աշխատավարձի ֆոնդի վրա հարկային բեռը՝ այդ թվում, եկամտային հարկի գծով չհարկվող անձնական նվազեցման գումար սահմանելով,
  - հնարավորություն ընձեռել հարկատուներին հարկման բազայից հանել տնտեսական գործունեության իրականացման համար բոլոր անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը,

<sup>1</sup> «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք:

<sup>2</sup> Taxation trends in the European Union. Data for the EU Member States, Iceland and Norway 2013 edition.

- կրճատել որոշ հարկատեսակների դրույքաչափերը՝ դրան գուգահեռ կրճատելով պետական բյուջեի անարդյունավետ ծախսերը:
6. Անուղղակի հարկերի տեսակարար կշռի ընդհանուր նվազեցումը: Ինչպես նախորդ գլխում կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ մեր հանրապետությունում անուղղակի հարկերի տեսակարար կշռը բավականին բարձր է, ինչ խոսում է կիրառվող հարկային քաղաքականության անկատարության և անարդյունավետության մասին: ԱԱՀ դրույքաչափը մեր հանրապետությունում դրա սահմանումից ի վեր մնացել է անփոփոխ՝ ինչը խոսում է այս հարկատեսակի սահմանման գուտ ֆիսկալ նպատակի մասին: Այս հարկատեսակի դրույքաչափի որոշակի նվազեցումը, կարծում ենք, կնպաստի տնտեսական ակտիվության աճին և հանրապետությունում ընդհանուր գների մակարդակի նվազեցմանը: Հաշվի առնելով, որ անուղղակի հարկերի իրական վճարողը՝ վերջին հաշվով, սպառողներն են հանձնիս մեր ազգաբանկչության, ապա դրանց տեսակարար կշռի նվազեցումը՝ տնտեսական զարգացման ներկա փուլում օբյեկտիվ անհրաժեշտություն է՝ համախառն պահանջարկը և սպառումը խթանելու ուղղությամբ:
  7. Հարկման խթանիչ ձևի արմատավորումը և կիրառումը, ինչի համար անհրաժեշտ են հարկման բազայի ձևավորման փոփոխություններ, հարկերի դրույքների տարբերակում՝ կախված տնտեսական գործունեության տեսակից և եկամտի աղբյուրից: Հարկային քաղաքականության բարեփոխումները հարկավոր է ուղղորդել դեպի արտադրական, առևտրային ու այլ ծախսերի կրճատումը խթանելուն: Այս խնդիրը պետք է լուծվի ինչպես մակրոմակարդակում, այնպես էլ միկրոմակարդակում: Հարկերը ոչ թե պետք է ընկերությանը ստիպեն ավելի շատ ծախսեր կատարելու և ձևակերպելու, որպեսզի քիչ հարկեր վճարեն, այլև պետք է նպաստեն իրական տնտեսական ռեսուրսների խնայություններին: Կարծում ենք, շատ ճիշտ և խելամիտ մոտեցում կլինի ընկերության շահութահարկի գանձման դեպքում չհարկել շահույթի այն մասը, որն ապահովվել է ինքնարժեքի նվազեցման հաշվին: Սա, մի կողմից, կխթանի տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող ներդրումները, իսկ մյուս կողմից, այլ հավասար պայմաններում, կնվազեցնի ապրանքների գները:
  8. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով<sup>1</sup> սահմանված ամփոփագիտն նվազագույն ժամկետների վերանայումը: Տնտեսության արդիականացման և վերազինման համար նպատակահարմար կլինի որոշակիորեն նվազեցնել այդ ժամկետները՝ կիրառելով արագացված ամփոփագիտ:
  9. Հարկային արտոնությունների արդյունավետության գնահատումը և դրա հիման վրա դրանց վերանայումը: Օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ արտոնությունների տնտեսական նպատակահարմարությունը պետք է ճշգրիտ գնահատվի և դրա արդյունքում՝ այդ արտոնությունները պետք է վերանայվեն և սահմանվեն բացառապես առանձին օրենքներով, որոնցում միաժամակ կսահմանվեն նաև դրանց արդյունավետության գնահատման և հսկողության կոնկրետ մեխանիզմներ: Այս քայլը, մեծապես կնպաստի սահմանվող հարկային արտոնությունների տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Հարկային արտոնությունները պետք է սահմանվեն բացառապես պետության ռազմավարական կարևորություն ունեցող կարևոր ոլորտների զարգացման, ճգնաժամների հետևանքների հաղթահարման և այլ կարևոր նպատակներից ելնելով:
  10. Տարածքային համաչափ զարգացման ռազմավարական նպատակից ելնելով՝ հանրապետության որոշ մարզերում հարկային տարբերակված դրույքաչափերի կիրառումը: Հաշվի առնելով, որ հանրապետության հիմնական տնտեսական ներուժը կենտրոնացված է մայրաքաղաքում, իսկ հանրապետության մարզերից մարդկանց մեծ արտահոսք կա դեպի մայրաքաղաք՝ հարկերի արտոնյալ դրույքաչափերի սահմանումը, մասնավորապես, սահմանամերձ մարզերի և աղետի գոտու տարածաշրջանի համար կնպաստի այս տարածքներում ձեռներեցեցության զարգացմանը, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության արտահոսքի կրճատմանը և նրանց կենսամակարդակի բարձրացմանը:

<sup>1</sup> «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք:

11. Հաստատագրված և արտոնագրային վճարներով հարկվող գործունեությունների որոշ մասի տեղափոխումը դեպի հարկման ընդհանուր դաշտ: Հաստատագրված վճարներով հարկվող ոլորտները բավականաչափ շատ են, ինչը բացասաբար է անդրադառնում մեր երկրում հարկային քաղաքականության արդյունավետության և հարկման համահավասարության սկզբունքի կիրառման վրա: Հարկային հսկողության բավարար մեխանիզմներ մշակելով նպատակահարմար կլինի հնարավորինս կրճատել այդ ոլորտը:
12. Տնտեսության իրական հատվածի ձեռնարկությունների տնտեսական արդյունավետության բարձրացումը: Մասնավորապես, Հայաստանում հարկային համակարգի արդյունավետ կազմակերպման միջոցով կարելի խթանել արտադրություններում աշխատանքի արտադրողականությունը, ինչի համար որպես ելակետ, կարելի դիտարկել սպառման ֆոնդի կամ աշխատավարձի ֆոնդի և աշխատանքի արտադրողականության հարաբերակցությունը: Վերջինս շատ կարևոր ցուցանիշ է՝ բնորոշելու արտադրական ձեռնարկության աշխատանքի արդյունավետությունը: Այն որոշվում է բազմաթիվ գործոններով՝ աշխատողների որակավորմամբ, արտադրության միջոցների վիճակով, աշխատանքի կազմակերպվածության աստիճանով, արտադրության ինովացիոն բնույթով, կառավարման մակարդակի արդյունավետության մակարդակով և այլն:
13. Տնտեսության մեջ ինովացիոն ոլորտներում ներդրումների խթանումը՝ շահութահարկի նվազեցման միջոցով: Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման առումով, կարծում ենք, կարևոր քայլ կարող է հանդիսանալ (և ինչը արտասահմանյան շատ երկրներում լայնորեն կիրառվում է) շահութահարկից մասնակի կամ ամբողջությամբ ազատել ընկերության շահույթի այն մասը, որը կներդրվի ինովացիոն տնտեսական ծրագրերում: Հարկերից մասնակի կամ ամբողջությամբ ազատումը կախված կլինի համապատասխան ներդրման ժամկետից: Սա մեծապես կխթանի ժամանակակից և հեռանկարային զարգացման ներդրումային ծրագրերի իրականացումը՝ ստեղծելով պետության համար հետագա լրացուցիչ հարկման բազա:  
Հարկային քաղաքականության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման ոլորտում, անխոս, չափազանց մեծ է հարկային վարչարարության դերը, որի բարելավման արդյունքում պետք է ապահովվի նաև այդ ոլորտի ծախսերի կրճատում՝ ինչպես հարկային մարմնի, այնպես էլ հարկ վճարողների համար:  
Կարծում ենք, որ հարկային վարչարարության ոլորտում բարեփոխումները պետք է ընթանան հետևյալ հիմնական ուղղություններով.
  1. հարկային մարմնի հետ հարատուների շփումների կրճատում,
  2. հարկային մարմնի ներկայացվող հաշվետվությունների քանակի և պարբերականության կրճատում,
  3. հաշվետվությունների մեջ արտացոլվող տեղեկատվության պարզեցում,
  4. փոքր և միջին բիզնեսի համար հաշվետվողականության առավել պարզեցված կարգի սահմանում,
  5. հարկային մարմինների աշխատակիցների համար նյութական խրախուսման այնպիսի համակարգի ներդրում, որոնք նվազագույնի կհասցնեն հովանավորչությունն այս ոլորտում,
  6. հարկային մարմնի լիազորությունների ընդլայնում: Որպես հարկերից խուսափելու դեմ պայքարի արդյունավետ միջոց, կարծում ենք, կհանդիսանա հարկատուների ծախսերի և եկամուտների համապատասխանության վերահսկումը: Այս նպատակով՝ հարկային մարմնին անհրաժեշտ է օժտել բավարար լիազորություններով՝ կատարված ծախսերի և ապրելակերպի հիման վրա հարակտուների եկամուտների գնահատման անուղղակի եղանակների կիրառման համար: Թաքցվող եկամուտները հայտնաբերելու և դրանց գծով հարկերը գանձելու ուղղությամբ այս միջոցառումները մեր կարծիքով հաջողությամբ կգործեն: Արտերկրի փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ փողերի լվացման և հարկերից խուսափելու դեմ պայքարում հարկային մարմիններն ունեն լայն իրավասություններ՝ նույնիսկ անբարեխիղճ հարկատուների եկամուտների վերաբերյալ ուղղակի տեղեկատվության աղբյուրների բացակայության

պայմաններում: Այստեղ կարևորում ենք, օրենսդրորեն ամրագրել տարբեր կառույցների և կազմակերպությունների, մասնավորապես, նոտարների, անշարժ գույքի գործակալների, աճուրդների և սակարկությունների կազմակերպիչների, դիլերների և այլոց կողմից հարկային մարմնին պարբերաբար համապատասխան տեղեկատվության տրամադրման պարտավորությունները՝ ցանկացած անձի կողմից կատարվող տնտեսական գործարքների և կատարված ծախսերի մասին: Այս պրակտիկան գործում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի հիման վրա և վերը նշված տեղեկատվությունը՝ պատկան մարմինները ներկայացնում են ՀՀ Կենտրոնական բանկ: Փողերի լվացման հիմնախնդրից պակաս կարևոր հիմնախնդիր չէ նաև հարկերից խուսափումը, ինչն, իր հերթին, կարող է տեղ գտնել հենց փողերի լվացման արդյունքում: Ուստի, առաջարկված միջոցառումներն այս ոլորտում կունենան բավական լուրջ հաջողություններ:

7. Հարկային ծառայողների պատասխանատվության, նրանց որակավորման ու արհեստավարժության մակարդակի նկատմամբ պահանջների խստացում, ինչի արդյունքում համակարգում կաշխատեն միայն բանիմաց և համապատասխան գիտելիքներ ունեցող մասնագետները:
8. Հարկային մարմնի կառուցվածքի օպտիմալացում, ավելորդ ստորաբաժանումների կրճատում, տվյալներ վերամշակման ավտոմատ համակարգերի և անձնակազմի կառավարման ժամանակակից համակարգի ներդրում,
9. Հարկային քաղաքականության մեջ հարկային վարչարարության ռազմավարության մշակում, որոնցով կսահմանվեն այս ոլորտում հարկային քաղաքականության գերակա նպատակները և դրանց իրագործումն ապահովող համալիր միջոցառումները:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ հանրապետության հարկային քաղաքականության պետական կարգավորման բարելավումը առաջիկա տարիներին պետք է ուղղված լինի վերոնշյալ հիմնախնդիրների լուծմանը, ինչը հնարավորություն կտա ձևավորել ժամանակակից ու տնտեսության ներկայիս իրավիճակին համապատասխանող մրցունակ հարկային համակարգ, իսկ հարկային քաղաքականության բարեփոխումների արդյունքում այն կվերածվի հզոր տնտեսական լծակի, որի միջոցով կապահովվի ինչպես պետության համար ցանկալի եկամուտների մակարդակ, այնպես էլ տնտեսության կայուն զարգացման բարենպաստ պայմաններ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ՝ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՋԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ

ՍՈՒՔԻԱՍ ԱՆԱՍՏԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Կոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի  
հայցորդ

Համառոտագիր

Հայաստանի Հանրապետությունում առաջիկա տարիներին իրականացվելիք հարկային բարեփոխումների հիմնական նպատակը պետք է լինի տնտեսական աճին նպաստող, տնտեսական մախաճեռությունները և ներդրումների ներգրավումը խթանող, ազգաբնակչության սոցիալական վիճակը բարելավող հարկային քաղաքականության ձևավորումը, որը միաժամանակ կապահովի նաև համապատասխան ծավալի բյուջետային մուտքեր՝ պետության կողմից ստանձնած ծախսային ծրագրերի ֆինանսավորման համար:

Հոդվածում ներկայացված են հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց առանձնահատկությունները: Հոդվածում ներկայացված են նաև հարկային քաղաքականության պետական կարգավորման բարելավման ուղղությունները ՀՀ-ում՝ տնտեսության զարգացման համատեքստում:

**Բանալի բառեր.** հարկային քաղաքականություն, պետական կարգավորում, հարկեր, հարկային բեռ, խթանում, հիմնախնդիրներ, բարեփոխումներ, բարելավում:

ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ В РА  
В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ

СУКИАС АНАСТАСЯН

соискатель Института экономики  
им. М.Котаняна НАН РА

Аннотация

Основной целью налоговых реформ, реализуемых в ближайшие годы в Республике Армения, должно быть формирование налоговой политики, способствующей экономическому росту, содействующей развитию экономических начинаний и привлечению инвестиций, улучшающей социальное положение населения, что одновременно обеспечит также соответствующие объемы бюджетных поступлений для финансирования принятых государством расходных программ.

В статье представлены проблемы государственного регулирования налоговой политики и их особенности. В ней представлены также пути совершенствования государственного регулирования налоговой политики в РА в контексте развития экономики.

**Ключевые слова:** налоговая политика, государственное регулирование, налоги, налоговая нагрузка, стимулирование, проблемы, реформы, совершенствование.

ISSUES ON STATE REGULATION OF THE TAX POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA  
IN THE CONTEXT OF DEVELOPMENT OF THE ECONOMY

SUQIAS ANASTASYAN

Ph.D. Student  
M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences  
Republic of Armenia

Abstract

The main objective of the tax reforms to be implemented in the Republic of Armenia in the future several years needs to be such a policy that stimulates economic growth, supports economic initiatives, promotes investments (attraction), entails the design of such a tax policy that improves the wellbeing (social condition) of the citizens, thus simultaneously ensuring respectively the required budget revenues in order to finance the programs undertaken by the government. The article presents the issues of the state regulation of the tax policy and its respective peculiarities. The article presents the approaches to improving state regulation of the tax policy in the Republic of Armenia in the context of development of the economy as well.

**Keywords:** tax policy, state regulation, taxes, tax burden, promotion, issues, reforms, improvement.